

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Դոկտ. Ալեքսանդր Սաֆարյանը Իրանում

Հայոց Ցեղասպանության 92-ամյակին նվիրված ձեռնարկների շարքում, առաջին անգամը լինելով, իրանահայ անկախ միությունների, մամուլի, Պատգամավորական ժողովի մի խումբ անդամների և անհատ մտավորականների համագործակցությամբ կյանքի կոչված Միասնական հանձնախումբը դիմեց իր անդամիկ գործնական քայլին և այդպիսով ինչ-որ կերպ նաև որակյալ համագործակցության մի փաստ արձանագրեց և հույս ունի այսուհետ էլ ավելի աշխուժացնել նման քայլերը:



Երևի ապրիլ ամիսը, հայության համար այն ժամանակահատվածն է, որ ավելի քան երբեք զգացվում է միասնականության կարիքը: Սակայն դժբախտաբար մեր համայնքում իշխող տարրի մենատիրական հոգեբանությունը միշտ էլ համայնքին զրկել է այդ կենսական պահանջից, ամենատեղի դրսևորումներով: Հայկական ժողովրդային միության և «Արաքս» թերթի պատանուները և որմնագրերը պատռտելով և այլն:

Ինչևէ, նորաստեղծ Միասնական հանձնախումբը արդեն իսկ արել է իր առաջին քայլը, որն է՝ ՀՄՄ «Րաֆֆի» համալիրի, Իրանահայ ազգային և մշակութային միության և «Արաքս» շաբաթաթերթի ապրիլյան ձեռնարկների համադրումը, որի արդյունքում Միասնական հանձնախումբի որոշմամբ հայաստանի մտավորական, երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, ավելի քան 40 գիտական աշխատությունների հեղինակ, «Հայոց Ցեղասպանություն-90» ժողովածուի համահեղինակ, ԵՊՀ թուրքագիտության ամբիոնի վարիչ՝ դոկտ. Ալեքսանդր Սաֆարյանը ապրիլի 26-30-ը հրավիրվել է Թեհրան, ժողովրդական ելույթներ և համոզիչություններ ունենալու համար:

Հիշատակելի է, որ Ալեքսանդր Վիլենի Սաֆարյանը ծնվել է 1964թ. Երևանում, մտավորականի ընտանիքում: 1981թ. ոսկե մեդալով ավարտել է Երևանի թիվ 19 դպրոցը: 1986թ. գերագանցությամբ ավարտել է ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետը: 1989թ. ավարտել է ԵՊՀ ասպիրանտուրան: 1988-1989թթ. լեզվական և երկրաբանական ստաժավորում է անցել Սիրիայի մայրաքաղաք՝ Դամասկոսում: Նա 1987թ. առ այսօր դասավանդում է Երևանի պետական համալսարանում: Իսկ 1996թ. առ այսօր ԵՊՀ թուրքագիտության ամբիոնի վարիչն է:

Ա. Սաֆարյանը աշխարհի ժողովուրդների «Էլիտա» ակադեմիայի անդամ է, պարզևատրվել է ԵՊՀ ոսկե մեդալով: Նրա գիտական ղեկավարությամբ պաշտպանվել են Հայաստանի Հանրապետությունում առաջին թեկնածուական ատենախոսությունները «Թուրքերեն լեզու» և «Թուրք գրականության» մասնագիտություններով: Նա Հայաստանում հրատարակված թուրքերենի առաջին դասագրքերի հեղինակային խմբերի ղեկավարն է: Անունանցած է, ունի որդի և դուստր:


Բարի գալուստ ենք մաղթում պրն. Ալեքսանդր Սաֆարյանին: Հուսանք, որ լավ տպավորություններով տուն կվերադառնա:

Իսկ Միասնական հանձնախումբին մաղթում ենք կանաչ ճանապարհ և հաջողություններով լի ապագա:



ԿԻՍԱՏ ԾՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ԱՆՅԵԹԵԹ ՉՔՄԵՂԱՆՔ ԾՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԻՍԱՏ ԱՍԵԼԻՆ ԱՎԵԼԻ ՄԵԾ ԽԱՆԳԱՆՔ Է, ՔԱՆ ՍՈՒՏ ԱՍԵԼՐ:


Երբեք մյա լուծվում էր ու նաև նրանից հետո, երբ իրանահայությունը հատկապես պետական նպատակներով վերաբերյալ «Արաքս»-ի խմբագրական հոդվածները վերադարձվեցին աշխարհի տարբեր ծայրերում հրատարակվող հայկական (բացի դաշնակ) մամուլի կողմից և մեկ անգամ ևս իր ցույց դրվեց Դաշնակցության դավանած «ժողովրդականության» իրական ղեկավար, Իսլամական խորհրդարանի ղեկավար հայ պատգամավորները պարտավորվեցին ՀՅԴ պաշտոնակալներին «Ալեք»-ի լրագրի վարդան Դավթյանի հետ ասուլիսի նստել, որպեսզի որոշ «բացատրություններ» տան այն մասին թե՛ «Ինչպես են բաժանվում պետական հատկացումները՝ կրոնական փոքրամասնությունների միջև», իսկ այդ ընթացքում Թեհրանի և Հյուսիսային իրանահայության պատգամավոր պրն. Գևորգ Վարդանը մոտանալով թե, որ դարձում է ապրում, հարցի էությունը պարզելու փոխարեն, միանգամայն հայտնվելով ինկվիզիցիայի դատավորի դերում, հայտարարում է, որ «Բողոքողների կամ նեղացածների կապակցություններ, որոնք ասում են՝ իրենց չի տրվել կամ քիչ է տրվել, ինձ թվում է, թե՛ ամեն մարդ պիտի նայի իր որդեգրած ընթացքին, ինքը ինչ վերաբերմունք ունի, ինչ ներդրում ունի ազգային կյանքում, ինչպես է վերաբերվում թե՛ մական և ազգային կատույցին (կարգա՝ Դաշնակցության) ու հայապահպանման հարցի հետ կապված ինչ ներդրում է ունեցել»: Եվ այդպիսով կարմիր գիծ քաշում իր և ոչ-դաշնակների միջև:



Գևորգ Վարդանը ասուլիսի ընթացքում անգամներ ինքն իրեն հակասում է: Նա ասում է՝ «ոչ մի դժգոհող գոյություն չունի, որովհետև ով որ պահանջ է ներկայացրել ազգային կատույցին, ստացել է համապատասխան օժանդակություններ»: Իսկ մի այլ բաժնում չքմեղանում է՝ «Իհարկե, չենք թաքցնում, որ, բնականաբար, կան դժգոհություններ, դա ամեն տեղ կա, և ընդհանրապես...»

ԹՈՒՐԵԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՄԵՐԾԵԼ Է ՔՆՆԱՐԿԵԼ ՐԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՄ

ՄՍԱՄՐՈՒԼ, 11 ԱՊՐԻԼԻ, ՆՈՅՅԱԼ ՏԱՊԱՆ: Թուրքիայի Ազգային մեծ ժողովը մերժել է Հայոց Ցեղասպանության հարցի շուրջ քննարկումներ անցկացնելու վերաբերյալ ընդդիմադիր Հանրապետա-ժողովրդական կուսակցության (ՀԺԿ) առաջարկը:



Յուրաքանչյուրը պատգամավոր Օնուր Էոզմենն էլ նշել է, որ Թուրքիան դարձել է «միջազգային որոշ սցենարների թիրախը»: «Տարբեր երկրներ ջանում են Թուրքիան նստեցնել հանցագործի աթոռի վրա», - պնդել է նա: Ինչպես հաղորդում է Ստամբուլի «Մարմարա» օրաթերթը, Էլեթդաղի և Էոզմենի այս հայտարարություններից հետո, Թուրքիայի խորհրդարանը, որտեղ մեծամասնությունն են կազմում Արդարություն և զարգացում իշխող կուսակցության պատգամավորները, մերժել է հարցը օրակարգ բերել:

ԴՊԿՏ. ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՖԱՐՅԱՆԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹԵՎՐԱՆՈՒՄ

- 1- Ապրիլի 26-ի երեկոյան ժամը 19-ին՝ ՀՄՄ «Րաֆֆի» համալիր,
- 2- Ապրիլի 27-ի երեկ. ժամը 19-ին՝ Իրանահայ ազգային և մշակութային միություն,
- 3- Ապրիլի 27-ի առավոտյան ժամը 10-ին՝ Իրանահայ գրողների միություն,
- 4- Ապրիլի 28-ի առավոտյան, ժամը 10:30-ին՝ ՀԲԸՄ Կանանց մասնաճյուղ,
- 5- Ապրիլի 28-ի երեկ. ժամը 19-ին՝ «Արաքս» շաբաթաթերթի գրասենյակ:

Հատված Հրանտ Դինքի վերջին հոդվածից

«Շատ բարի, բայց ո՞ր գնալ: Հայաստան: Ինչպես կարող էր ինձ մնան մեկը, որն ընդվզում է անօրինակ անուշաբույր անձանցի դեմ, համարժեք այնտեղ կատարվող անօրինակ անուշաբույրները: Գուցե այնտեղ ինձ ավելի մեծ փորձություններ էին սպասում»:

ԱՐԾՐՈՒՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
«ԱԶԳ», 17.02.07:



ՀՐԱՆՏ ԴԻՆԻ ՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ՆՈՐ ՄԱՆՐԱՄԱՆԵՐ

Մտամբույի «Ակոս» թերթի խմբագրապետ Հրանտ Դինքի դեմ սպանություն կազմակերպվելու մասին անվտանգության մարմինների հետ 5 ամիս առաջ տեղեկացված է եղել նաև թուրքական ժամագրմերի մասին: Հետ թուրքական «Հուրիեթի» պղծ մասին Մտամբույի ոստիկանության ահաբեկչության դեմ պայքարի բաժնում հարցաքննության ժամանակ հայտնել է Դինքի սպանության կազմակերպչներին ցածր մասին հորաքրոջ ամուսինը՝ Ջոզեֆին Իզլին: Դինքի գործով հունվարի 31-ին ձերբակալված Իզլին ասել է, որ ինքն անձամբ է այդ մասին տեղեկացրել Տրապիզոնի ժամագրմերի մասին երեք աշխատակիցներին:

Ժամագրմերի աշխատակիցները վստահեցրել են, որ իրավիճակը վերահսկում են, որ հարցն արդեն լուծված է, և որ Հայաստանում քայլի չի դիր:



Իզլին նրանց հայտնել է նաև Հայաստանի երեք հեռախոսահամարները և տեղեկություններ՝ նրա համալսարանական ընկերների մասին: Հարցաքննության ժամանակ Իզլին ասել է, որ Դինքի սպանությունից մեկ օր հետո նույն ժամագրմերն անհայտ մեկի հետ այցելել են իրեն, ով ասել է, թե «հերոսանալու տեղեկություններ հայտնելու հետ մենք մեզ խայտառակել ենք»:

Թուրքական ժամագրմերի քաղաքացիական գործակալ Իզլին ասել է, որ տեղեկացրել է նրանց Հրանտ Դինքին սպանելու համար մոտ 220 ԱՄՆ դոլարով դեռևս ձեռք բերելու Հայաստանի ոստիկանների մասին, և որ վերջիններս պահանջել են իրենից այդ գումարը վերցնել Հայաստանից: Դինքի գործով Ռոջ ժամանակ անց, Հայաստանի պահանջել է գնել կամ գումարը: Ժամագրմերի խորհրդով և հետագայում հարցաքննության Իզլին գումարը վերադարձրել է Հայաստան:

Ա. ԳՅՈՒԼԸ ԸԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԳՈՂ ԵՐԿՐՆԵՐԻՆ ՄԵՂԱԴՐԵԼ Ե ԱՆԱԲԵԿՉՈՒԹՅԱՆԸ ՍԱՏԱՐԵԼՈՒ ՄԵՋ

«Հայկական ահաբեկչական կազմակերպություններն ու ապօրինի միջազգային խմբավորումները իրականացրել են մի շարք թուրք դիվանագետների սպանություններ»



Լարանին հաղորդել է, թե «Հայկական ահաբեկչական կազմակերպություններն ու ապօրինի միջազգային խմբավորումները իրականացրել են մի շարք թուրք դիվանագետների սպանություններ»:



«Ողջ աշխարհը շատ լավ գիտի, որ թուրքերը երբեք չեն վախեցել վտանգել սեփական կյանքը հանուն բարձր արժեքների»,- ոչ առանց պաթոսի նշել է թուրք դիվանագետը, հույս հայտնելով, որ «օտար պետությունները կհիշեն այն մասին, թե ինչպես են այդ ավազակային խմբավորումներն ահաբեկչական գործողություններ իրականացրել անգամ ամենաքաղաքակիրթ երկրների տարածքներում»:

Թուրքիայի արտգործնախարար Աբդուլլահ Գյուլը խտորեն քննադատել է օտար պետությունների խորհրդարաններին Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ բանաձևեր ընդունելու համար: Նա հայտարարել է, որ չարժեք խաբվել ու հուսալ, թե իր նախագահության ժամանակ սոսկ «խաղ են»: Այդ մասին Թուրքիայի արտգործնախարարը հայտարարել է օտար պետություններում ահաբեկչական գործողությունների արդյունքում զոհված թուրք դիվանագետների հիշատակին նվիրված արարողությունից ժամանակ:

Ինչպես հաղորդում է «Թուրքիզ դեյլի նյուզ»-ը, Աբդուլլահ Գյուլը Հայոց ցեղասպանությունը ճանաչած երկրների խորհրդարաններին մեղադրել է ահաբեկչությունը սատարելու համար: Նա

Բացվել է Իրան-Հայաստան գազամուղը

Մարտի 19-ին Ազարակում հայ-իրանական սահմանին բացվել է Իրան-Հայաստան գազատարի 40 կիլոմետրանոց հատվածը: Հանդի-

ռուսագաղար»-ը արդեն այս տարվանից կսկսի երկրորդ խողովակաշարի կառուցումը, և այդ դեպքում արդեն Հայաստանը կարող է իրանական



Մենք միասին կատարում ենք գազամուղի բացումը, ինչի մասին պայմանավորվել էինք թեհրան իմ առաջին պաշտոնական այցի ժամանակ: Եվ չնայած նման արարողություններին համար ոչ բարենպաստ եղանակին՝ այստեղ է Իրանի նախագահը, և դա մեր բարեկամության վկայություններից մեկն է», - բացման հանդեսավոր արարողության ժամանակ ասաց Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Նախագահները պաշտոնապես բացեցին Իրան-Հայաստան գազատարը դրանից վառելով խորհրդանշական ցախը:

կողմից 2,3 միլիարդ խորանարդ մետր գազ ստանալ:

Նախագծի երկրորդ փուլով նախատեսվում է Քաջարանից Արարատ գազամուղի շինարարությունը՝ 150 կմ երկարությամբ: Նախագծի ընդհանուր արժեքը կազմում է 200-250 մլն դոլար:

«Հայռուսագաղար» ընկերության գլխավոր ինժեներ Աշոտ Հովսեփյանի տեղեկացմամբ, անհրաժեշտ քանակությամբ իրանական գազ Հայաստան ներմուծելու համար անհրաժեշտ է մեծացնել Արարատ-Քաջարան գազատրանսպորտային համակարգը, կատարել ընդլայնման աշխատանքներ: Քանի որ ներկայումս գործող համակարգը հնարավորություն է տալիս ներմուծել 300-400 միլիոն խմ գազ, ընդլայնելուց հետո հնարավոր կլինի ներմուծման ծավալները հասցնել նախ մեկ մլրդ խմ-ի, ապա 2,2 մլրդ-ի: Համակարգի ընդլայնման համար «Հայռուսագաղար»-ը նախատեսում է ներդնել 150 մլն դոլար: Ընդլայնման աշխատանքները կավարտվեն 2008 թվականի վերջին:

141 կմ երկարությամբ Իրան-Հայաստան գազամուղի շինարարությունը սկսվել էր 2004 թվականի նոյեմբերին: Խողովակի տրամագիծը 710 մմ է: Նախագծի արժեքը 33 մլն դոլար է, որի 15 տոկոսի համաֆինանսավորումը կատարում է հայկական կողմը: Վարկը տրամադրում է Իրանի արտաքին գաղափարային 5 տարի մարման ժամկետով, 5 տոկոս տոկոսադրույքով: Հայաստանի էներգետիկայի փոխնախարար Արա Սիմոնյանի խոսքերով, այս պահի դրությամբ Հայաստանը տարածքում Իրանից կարող է ստանալ մինչև 400 միլիոն խորանարդ մետր գազ, բայց, քանի որ ցանկություն կա ավելի շատ գազ ստանալ իրանական կողմից, հետևաբար՝ ընդլայնման աշխատանքներ պետք է իրականացվեն:

Փոխնախարարի խոսքերով, «Հայաստանի և Իրանի էներգետիկայի նախարարներն մարտի 19-ին Մեդրիդում միջկառավարական համաձայնագիր են ստորագրել Արաքս գետի վրա ՀԷԿ-ի համատեղ կառուցման և շահագործման մասին: Փաստաթղթի ստորագրումը տեղի է ունեցել Իրան-Հայաստանի գազատարի բացման արարողությունից հետո, որին մասնակցել են Հայաստանի և Իրանի նախագահներ Ռոբերտ Քոչարյանն ու Մահմուդ Ահմադինե-ժադը: Ռոբերտ Քոչարյանն ասել է, որ ՀԷԿ-ի համատեղ կառուցումը «նոր էջ կբացի հայ-իրանական հարաբերություններում»: Նա ընդգծել է, որ 15 տարի առաջ Մեդրիդում ոչինչ չէր վկայում հայ-իրանական հարաբերություններին մասին, և երկու կողմերին բաժանում էր փշալարը: «Այսօր այստեղ շատ բան է վկայում մեր աճող կապերի մասին: Այն կամրջով, որի վրա են այսօր դիմավորեցի

տնտեսական համագործակցությունը սկսել է շոշափել խոշոր ենթակառուցվածքային նախագծեր: Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինե-ժադն ասել է, որ Ռոբերտ Քոչարյանի հետ ընդարկել է էներգետիկայի, տրանսպորտի, կապի և ջրային տնտեսության ոլորտում համագործակցության հարցերը:

Ստորագրվել է Արաքսի վրա ՀԷԿ-ի կառուցման հայ-իրանական համաձայնագիր

Հայաստանի և Իրանի էներգետիկայի նախարարներն մարտի 19-ին Մեդրիդում միջկառավարական համաձայնագիր են ստորագրել Արաքս գետի վրա ՀԷԿ-ի համատեղ կառուցման և շահագործման մասին:

Իրանի նախագահին, անցած տարի տեղափոխվել է 600 հազար տոննա բեռ»,- ասել է Հայաստանի նախագահը:

Ռոբերտ Քոչարյանն առանձնակի ընդգծել է, որ Հայաստանի և Իրանի



տնտեսական համագործակցությունը սկսել է շոշափել խոշոր ենթակառուցվածքային նախագծեր: Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինե-ժադն ասել է, որ Ռոբերտ Քոչարյանի հետ ընդարկել է էներգետիկայի, տրանսպորտի, կապի և ջրային տնտեսության ոլորտում համագործակցության հարցերը:

ՄԻ ՔԱՆԻ ՏՈՂՈՎ...

Ռ- Հայաստանում մշակվում է Իրան-Հայաստան նավթամուղի և Մեդրիդում նավթավերամշակման գործարանի շինարարության նախագծի տեխնիկատնտեսական հիմնավորումը, Արմինֆո գործակալությանը տված բացառիկ հարցազրույցում ասել է ՀՀ էներգետիկայի նախարար Արմեն Մովսիսյանը:

Ռ- Ռուսաստանյան մեծահարուստների ցուցակում տեղ են գտել մեկ տասնյակ հայեր:

Ռ-Հայաստանում 2006թ. գիտական աստիճան է ստացել 20 օտարերկրացի, այդ թվում՝ Ռուսաստանից, Թուրքիայից, ԱՄՆ-ից, Իրանից, Վրաստանից, Սիրիայից և Ուրուգվայից:

Ռ- «Իրանցի մասնագետներն ստեղծել են անօդաչու հետախույզ ինքնաթիռ, որը կարող է թռչել մինչև 700 կիլոմետր»,-իրանական արաբալեզու «Ալ Ալամ» արբանյակային ավիաընկերությունը է Իրանի իսլամական հեղափոխության պահապանների կրպակի իրանա-նատար Ռահիմ Սաֆավին:

Ռ- ՀՀ մշտական բնակչության թիվը 3 մլն 222,7 հազար է:

Ռ- Օտար երկրներից հատկացվող ռազմական ֆինանսավորման ծրագրի շրջանակներում, ԱՄՆ-ի կառավարությունը 2008թ. բյուջեով առաջարկել է Ադրբեյջանին հատկացնել 4 միլիոն 300 հազար, իսկ Հայաստանին՝ 3 միլիոն ԱՄՆ դոլար:

Ռ- Մոտավոր տվյալներով, Գերմանիայում 30-35 հազար հայ է բնակվում:

Ռ- Խաղաղության Նոբելյան մրցանակի համար առաջադրվել է 181 թեկնածու:

Ռ- «Ակոս» հայ-թուրքական թերթի գլխավոր խմբագիր Ետիեն Մախուլյանը դեմ է հանդես եկել ԱՄՆ Կոնգրեսի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևի ընդունմանը:

Ռ- Երկրագնդի վրա ամեն օր տվյալից և թերմոմից 18 հազար երեխա է մահանում, 850 հազար մարդ կիսաքաղց գոյություն է պահպանում:

Ռ- Հայաստանում ծխում է չափափա տղամարդկանց 67.5, կանանց՝ 3.1 տոկոսը:

Ռ- «Երևանի 4. Բյուրոսի անվան պետական լեզվաբանական համալսարանը առաջադրում է անվանի հասարակական գործիչ, Ստամբուլի «Ակոս» շաբաթաթերթի հիմնադիր և գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի թեկնածությունը Հայոց ցեղասպանության ճանաչման գործում նշանակալի ավանդ ներդրած անձանց շնորհվող մրցանակի համար»:

Ռ- Հայաստանում կանայք բնակչության 51.7 տոկոսն են: 2006թ. տարեկազմի տվյալներով, Հայաստանի հանրապետությունում ապրում է 1 մլն 665 հազար 123 կին: Կանանց ամենաբարձր տեսակարար կշիռն արձանագրվել է Երևանում՝ 53.3 տոկոս:

Ռ- Իրաքահայ համայնքը պատերազմի չոր տարիներին 28 զոհ է տվել, նույնքան հայ էլ առևանգվել է:

Ռ- Պոլտո Հայոց պատրիարք Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանը կարծիք է հայտնել, թե ամերիկյան Կոնգրեսում ներկայացված Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձևի ընդունումը «որևէ մեկին օգուտ չի բերի»:

Ռ- Լեռնային Ղարաբաղում նախագահական ընտրությունները տեղի կունենան հուլիսի 19-ին:

Թուրք լրագրող Մեհմեդ Ալի Բիրանդ. «ԱՐԴՅՈ՞Ք ՄԵՆՔ ԿՈՐՑՐԵՑԻՆՔ ՊԱՅՔԱՐԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՑԻ ՇՈՒՐՁ»

ԱՆԿԱՐԱ, 7 ՄԱՐՏԻ, ՆՈՅՑԱՆ ՏԱ-
ՊԱՆ: «Յուրաքանչյուր օր Հայկական
սփյուռքը ավելի է ոգևորվում: Ցեղաս-
պանության մասին պնդումներում
նրանք ուժե-
ղացնում են
իրենց դիրքե-
րը, և որովհե-
տե թուրքերի
չի կարողա-
նում սխալվել,
սփյուռքահա-
յերը ավելի են մոտենում իրենց թիրա-
խին»: Նման կարծիք է Հայտնել
թուրք Հայտնի լրագրող Մեհմեդ Ալի
Բիրանդը «Թրքբիշ դեյլի նյուզ»-ում
«Արդյո՞ք մենք կորցրեցինք ցեղաս-
պանության պատերազմը» խորագր-
յալ հոդվածում:

Ըստ Բիրանդի, Հայկական սփյուռքը
երեք նպատակ է հետապնդում.

1- աշխարհին ճանաչել տալ ցեղաս-
պանությունը՝ որպես պատմական
իրողություն և մարդկանց համոզել, որ
թուրքերը ցեղասպանություն են իրա-
կանացրել;

2- միջազգային Հանրություն կողմից
ապահովել ցեղասպանության քաղա-
քական ճանաչումը և համոզել կառա-
վարություններին, որ այն պատմական
փաստ է;

3- ճանապարհ բացել՝ երաշխիքներ և
նույնիսկ տարածքներ ստանալու
Թուրքիայից, եթե ցեղասպանությունը
ճանաչվի քաղաքականապես:

Հոդվածագիրը նշել է, թե Հայկական
սփյուռքը նախ միջազգային Հանրու-
թյանը ներկայացավ այն փաստարկով,
որ ցեղասպանությունը պատմական
իրողություն է: Բիրանդը ընդունել է,
որ ամերիկյան և եվրոպական հասա-
րակություններում իրանք կորցրել են
ցեղասպանության հարցի շուրջ տար-

վող ճակատամարտը: «Հակառակ
մեր կողմից իրականացված բազմա-
թիվ ուսումնասիրություններին, մեր
հրատարակած գրքերին և փաստաթղ-
թերին՝ շատ դժվար է լինելու մարդ-
կանց համոզել հակառակում, եթե չա-
սենք անհնարին»,- խոստովանել է նա:

Բիրանդը ապացուցել է, որ Հայկա-
կան սփյուռքն այժմ անցել է գործու-
նեությունների կրկնում: «Նրանք
այժմ պայքարում են ցեղասպանու-
թյան քաղաքական ճանաչումն ապա-
հովելու համար: Թուրքերի յուրա-
քանչյուր տարի նույնպես նահանջում
է այս դաշտում: Ցեղասպանությունը
ճանաչող երկրների գնացքին միացող-
ների թիվը գնալով շատանում է, իսկ
մենք չենք կարող հեռու գնալ միայն
ընդդիմանալով: Համենայնդեպս մենք
չենք կարող շատ բան անել: Մի՞թե կ-
վելու ենք բոլորի հետ և փակելու ենք
մեր դռները ու մեկուսանանք»,- բողո-
քում է Բիրանդը:

Թուրք լրագրողը են-
թադրում է, որ ԱՄՆ
Կոնգրեսը կարող է հե-
տաձգել իր օրակարգում
Հայտնված Հայոց ցեղաս-
պանության ճանաչման
վերաբերյալ օրինագծի
քվեարկությունը մինչև
2008 թ.: «Սակայն ի՞նչ
փոփոխություն կտա մեզ
այս քայլը: Վերջում Վաշ-
ինգտոնը նույնպես միա-
նալու է ցեղասպանությունը ճանաչած
երկրների գնացքին»,- փաստում է Բի-
րանդը:

Այս իրականությունից հաջողու-
թյամբ դուրս գալու համար հոդվածա-
գիրը պաշտոնական Անկարային առա-
ջարկում է բարելավել հարաբերու-
թյունները Հայաստանի հետ. «Այս



քայլը ավելի կարևորություն է ստա-
նալու նույնիսկ տարբեր երկրների
կողմից ցեղասպանության քաղաքա-



կան ճանաչման փուլում: Հայաստանի
հետ ստեղծական հարաբերություննե-
րի զարգացումը և սահմանի բացումը
կբարձրացնեն Թուրքիայի նշանակու-
թյունը տարածաշրջանում և կմեղմաց-
նեն իր վրա իրականացվող ճնշումնե-
րը»,- եզրակացրել է Մեհմեդ Ալի Բի-
րանդը:

Շվեյցարական դատարանը Դոդու Փերինչեքին դատապարտեց Հայոց ցեղասպանության ուրացման համար

Շվեյցարական դատարանը մարտի
9-ին Թուրքիայի աշխատավորա-
կան կուսակցության նախագահ Դոդու
Փերինչեքին մեղավոր ճանաչեց ուս-
սայական խտրականության մեջ՝ 1915
թվականի Հայոց ցեղասպանությունը
հերքող նրա հրատարակյալին Հայտա-
րարությունների համար: Լոզանի դա-
տարանը թուրքական ազգայնական
կուսակցության առաջնորդի նկատ-
մամբ սահմանեց 90-օրյա պալմանա-
կան ազատազրկում կամ դրան հա-

նությունը, և
նրա դեմ դործ էր
հարուցվել՝ հա-
մաձայն Շվեյցա-
րիայի հակառա-
ս ի ս ո ս ա կ ա ն
օրենքի: Հիշյալ
օրենքով քրեա-
կան պատիժ է
սահմանված նաև ցեղասպանության
կամ մարդկության դեմ այլ հանցա-
գործությունների ուրացման համար:
Ինչպես նշում է «Միջազգային» գոր-
ծակալությունը, սա առաջին դեպքն է,
երբ 1995 թվականին Շվեյցարիայում
ուժի մեջ մտած հակառակադատական
օրենքը կիրառվում է Հայոց ցեղասպա-
նության անջուրհանում: 2001 թվակա-
նին Բեռնի դատարանը արգելադրել էր
նույն մեղադրանքով դատարանի
առջև կանգնած 12 թուրքերի: «Այս
դատավճիռն ամենակարևոր կետն այն
է, որ Հայոց դեմ գործված ցեղասպա-
նությունը պատմական անվիճելի իրո-
ղություն է Շվեյցարիայի օրենսդրու-
թյան առջև, և ոչ մեկն իրավունք չպի-
տի ունենա այս իրողությունը կասկա-
ծի տակ դնել»,- «Ազատություն» ռա-
դիոկայանին տված հարցազրույցում
ասաց դատարանում Հայկական կողմի
շահերը ներկայացնող Շվեյցարահայ
միությունից Համանախագահ Սարգիս
Շահինյանը:

Նա առանձնացրեց Լոզանի դատա-
րանի այսօրվա վճիռն մեկ այլ կարևոր
հանգամանք. - «Դոդու Փերինչեքն ըն-
դունվեց որպես օտարապետ, ժխտ-
ողական անձնավորություն, որն՝ իմա-
նալով իր արածները, ուզեց դիտմամբ



մարտեք տույժ, ինչպես նաև 3 հազար
շվեյցարական ֆրանկի կամ 2,5 հա-
զար դոլարի տուգանք:

Փերինչեքը կարող է խուսափել ազա-
տազրկումից, եթե առաջիկա երկու
տարիների ընթացքում չկրկնի իր
արարքը:

Երկու տարի առաջ Լոզանում թուր-
քերի մի հավաքի ժամանակ Փերինչե-
քը «միջազգային սուտ» էր օրակել
Օսմանյան Թուրքիայում Հայերի
նկատմամբ գործադրված ցեղասպա-

Փերինչեքին ուրացման համար

ժխտել Հայկական ցեղասպանությու-
նը»:
Շվեյցարիայի խորհրդարանի ստորին
պալատը Հայոց ցեղասպանությունը
ճանաչել է 2003 թվականի դեկտեմբե-
րին:

ԱՂԱՍ ԾԻՖԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԶԵՎԻ ԸՏ ԿԱՊՎԱԾ ԸՆԴՑԵՐ Է ՈՒՂՂԵԼ ՔՈՆԴՈԼԻԻՉԱ ՈԱՅՍԻՆ

ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացու-
ցիչների պալատի արտաքին
հատկացումների ենթահանձնաժո-
ղովում չորեքշաբթի օրը կայացած
խումբի ժամանակ դեմոկրատ
կոնգրեսական Ադամ Շիֆը հարցեր է
ուղղել պետքարտուղար Քոնդոլիզա
Ռայսին՝ կապված Հայոց ցեղասպա-
նության պատմական փաստը վերա-
հաստատող թիվ 106 բանաձևի հետ,
որին դեմ է ԱՄՆ-ի վարչակազմը:

Այս տարվա հունվարին Շիֆի և մի
քանի այլ կոնգրեսականների Եր-
կայացրած օրինագծի տակ մինչ օրս
իրենց ստորագրություններն են դրել
180 կոնգրեսականներ:

Կոնգրեսականը հարցրել է Ռայսին,
թե ինչպե՞ս Միացյալ Նահանգները,
որը չունի Հայոց ցեղասպանությունը
ճանաչելու կամք, կարող է ունենալ
բարոյական հենք՝ Դարֆուրի ցե-
ղասպանությունը դատապարտելու
համար: Նա հարցրել է նաև, թե արդ-
յո՞ք պետքարտուղարը կասկածներ
ունի Հայոց ցեղասպանության հար-
ցում:

«Կարծում եմ, պատմական հանգա-
մանքները պահանջում են, որպեսզի
մենք պատմաբանների հանձնաժո-

ԱԿԱՆԱԿՈՐ ՔՈՒՐԴ ԳՈՐԾՉԻ ԿԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ Հատված «Բարզանին և քրդական ազգային շարժումը» երկհատոր աշխատությունից

Հյուսիսային Իրաքի քրդական
ինքնիշխանության ղեկավար,
Քրդստանի դեմոկրատական կու-
սակցության նախագահ Մասուդ
Բարզանին գրի է առել իր հոր՝ Մուլա
Մուստաֆա Բարզանիի գործունեու-
թյանը նվիրված երկհատոր աշխա-
տություն: «Բարզանին և քրդական
ազգային շարժումը» վերնագրով
իրատարված այս աշխատության
մեջ նա շարադրել է Հայոց ցեղաս-
պանության մասին Մուստաֆա
Բարզանիի հուշերը, որոնցում նկա-
րագրվում են տեղահանված հայե-
րին ջարդերից փրկելու համար հայ-
կական խմբավորումների հետ Բար-
զանիների համագործակցության
դրվագներ:

Մինչև հուշերին անդրադառնալը,
նշենք, որ աշխատության հեղինակ
Մասուդ Բարզանիի մեծ հայր Շեյխ
Մուհամմեդը եղել է Բարզանիների
ցեղի կրոնապետը: Շեյխ Մուհամմե-
դի մահից հետո նրա որդին Շեյխ
Աբդուլսալամը կրոնապետի պաշ-
տոնը համարել է ցեղապետի պաշ-
տոնի հետ, դառնալով հոգևոր և
ռազմաքաղաքական առաջնորդ:

Սակայն 1914 թ., երբ Մուսուլում
Օսմանյան կայսրության դեմ ապս-
տամբելու համար անջատողակա-
նության մեղադրանքով կախաղան է
բարձրացվել Շեյխ Աբդուլսալամ
Բարզանին, օսմանյան իշխանու-
թյունները կրոնապետի պաշտոնը
տարանջատել են ցեղապետի պաշ-
տոնից: Այս պայմաններում Աբդուլ-
սալամի որդիներից Շեյխ Ահմադը
դարձել է հոգևոր, իսկ Մուլա Մուս-
տաֆան՝ ռազմաքաղաքական
առաջնորդ:

Հենց այդ ժամանակ էլ սկսվել է
արևմտահայերի ջարդն ու տեղա-
հանությունը, որի ընթացքում արձա-
գանքելով զորավար Անդրանիկի
նամակին, Շեյխ Ահմադն օժանդակ
չղկատ է ուղարկել: Սիս թե ինչ է
պատմել այդ օժանդակության մա-
սին Մուլա Մուստաֆա Բարզանին.
«Շեյխ Ահմադը Վելի Բեյի գլխավո-
րությամբ 200 հոգանոց ջոկատ ու-
ղարկեց Անդրանիկին: Ես Վելի Բեյի
գլխավորած այդ ջոկատի կազմում
էի: Շարժվեցինք հայերին օգնելու:
Սակայն ռայկան և հորմորի աշի-

րաքների (ցեղ) տարածքից անցնե-
լիս, երբ հարցնում էին ո՞ր եք
գնում, մենք պատասխանում էինք.
«Գնում ենք հայերին կոտորելու»:
Դժբախտաբար, թուրքական իշխա-
նությունները բնակչությանը համո-
զել էին, թե (1915 թ.) իրադարձու-
թյունները մահմեդականների պա-
տերազմն է քրիստոնյաների դեմ և
Օսմանյան կայսրությունը պատե-
րազմում է հանում իսլամի: Մենք օգ-



նեցինք հայերին, հասցնելով նրանց
մինչև Սիրիա: Հայերին օգնելու հա-
մար կռվի ենք բռնվել թուրքական
զորքերի հետ և սկսել ենք 14 գոհ»:

Մեր կողմից ավելացնենք, որ Մուլ-
ա Մուստաֆա Բարզանին ապրել է
մինչև 1979 թ.-ը, Հյուսիսային Իրաքի
Սուլեյմանիե քաղաքում: Նրա մա-
հից հետո առաջնորդ է առաջադրվել
որդին Մասուդ Բարզանին, որը դե-
ռես 16 տարեկանում ակտիվորեն
մասնակցում էր քրդական ազգային
շարժմանը՝ հետևելով հոր օրինա-
կին: Թերեւս այդ առումով պատա-
հական չեն վերոհիշյալ աշխատու-
թյան նախաբանում Մասուդ Բարզա-
նիի հետևյալ խոսքերը. «Ես այս աշ-
խատությունը գրի եմ առել էլճելով
քուրդ ժողովրդի պայքարում Բար-
զանիների առաքելության վրա ուշ-
ադրություն հրավիրելու անհրաժեշ-
տությունից»: Ի դեպ, այս ամենը քա-
ղել ենք թուրքական [www.kuvvaamil-
liye.net](http://www.kuvvaamil-
liye.net) կայքէջից:

«ԱԶԳ»



կա Թուրքիա-
յում:
«Մենք ճանա-
չել ենք պատ-
մական հան-
գամանքները
և ճանաչում

ենք դրանք
ն ա խ ա գ ա հ ի
ա մ ե ն ա մ յ ա
ե լ ու յ թ ո վ », -
ամփոփել է
Ք ո ն դ ո լ ի գ ա
Ռայսը:
Ավելի ուշ Ադամ Շիֆը Ամերիկայի
հայկական համագումարին հայտա-
րարել է. «Մենք չենք կարող ունենալ
Դարֆուրում ընթացող ցեղասպանու-
թյան դեմ գործողությունների դիմե-
լու բարոյական ուժ, եթե վարչակազ-
մը շարունակի հրաժարվել հայերի
դեմ իրականացված ցեղասպանու-
թյան վերաբերյալ պարզորոշ հայ-
տարարությունից»:

□

ԱՆՈՆԼԴ ԶԿԱՐՑԵՆԵԳԵՐԸ ԱՊՐԻԼԻ 22-29-Ն ԸՆԿՈՑ Ե «ԸՆՅՈՑ ՑԵՂԱՄԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿՆԱԿԱՄԱՆ ՕՐԵՐ» ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅՈՒՄ

Կալիֆոռնիայի նահանգապետ Անոնոլ Եվարցենեգերը ապրիլի 22-ից 29-ը ընկած ժամանակահատվածը հռչակել է «Հայոց ցեղասպանության հիշատակման օրեր»:

Նահանգապետի գրասենյակի տարածած հայտարարության մեջ նշվում է, որ Անոնոլն աշխարհամարտի քառուստարներին 1915-1923թթ. Օսմանյան կայսրության սահմաններում ապրող ավելի քան 1,5 միլիոն հայ տղամարդիկ, կանայք և երեխաներ սպանվել են, հարյուր հազարավոր հայերի ունեցվածքը, ազգային սովորույթները և հայրենիքը խլելուց հետո նրանց բռնի արտաքսել են:

«Ապացուցվելով իբրև 20-րդ դարի առաջին ցեղասպանություն, Հայոց ցեղասպանությունը մինչ օրս մնում է չճանաչված: Ես համամիտ եմ այն տեսակետներին, որ բոլոր պետությունները պետք է քննեն իրենց ցավալի պատմությունը», - ասվում է նահանգապետի տարածած հայտարարության մեջ:

«Ես միանում եմ Կալիֆոռնիայի ամերիկահայերի համայնքին և աշխարհի բոլոր հայերին՝ հիշատակելու բոլոր նրանց, ովքեր սպանվել և հալածվել են Հայոց ցեղասպանության ժամանակ և պահանջում եմ, որ աշխարհում ոչ ոք երբեք չմոռանա մարդկության դեմ գործված այս սարսափելի հանցանքը»,- հայտատարել է Եվարցենեգերը:

Իսկ ապրիլի 16-ին ԱՄՆ-ի Նևադայի նահանգապետ Ջեյմս Գիբերնան էլ հրապարակել է պաշտոնական հայտարարություն, որով ապրիլի 24-ը հայտարարվում է Հայոց ցեղասպանության հիշատակման օր: Փաստաթուղթը մասնավորապես ընդգծում է, որ Հայոց ցեղասպանության հանդիսանում է 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը:



CNN-ն ՈՒ EuroNews-ը ԸՆԿՆԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԸՆԿՆԱԿԱՄԱՆ ԵՆ ԸՆԿՆԱԿԱՄԱՆ ԵՆ

2007 թվականի մարտից CNN-ն ու EuroNews-ը Հայաստանի մասին գովազդային-տեղեկատվական հոլովակներ են հեռարձակելու: Այդ մասին տեղեկացրել է Զբոսաշրջության և տնտեսական զարգացման նախարարության գրասենյակի մարտի 20-ի հրահանգով Մեխակ Ապրեսյանը: «Մենք արդեն համապատասխան բանակցություններ են վարում հեռուստաընկերությունների հետ և ծրագրում ենք հոլովակների հեռարձակումն իրականացնել մինչև 2007 թվականի աշուն», - ասել է Մ. Ապրեսյանը: Նա ընդգծել է, որ հեռուստաընկերությունների եթերում ներկայացվելու են Հայաստանի մասին այն հոլովակները, որոնք արդեն հեռարձակվել են CNN-ով 2006 թվականի սեպտեմբերից:

«Մեր խնդիրը Հայաստանի մասին գովազդային հոլովակի պարբերական ցուցադրությունն է արտասահմանցի գրասենյակներին մեր երկրին ծանոթացնելու նպատակով: Մենք ծրագրում ենք այդ հոլովակների միջոցով կտրել բացասական ստերեոտիպերի ընկալման հարցում և ձևավորել Հայաստանի իմիջ՝ որպես արագ զարգացող, բարգախելիչ և ամենամոտանգ, տուրիզմի և ներդրումներ կատարելու համար գրավիչ երկրներից մեկի»,- ասել է Մ. Ապրեսյանը, հաղորդում է «Նովոստի-Առուսիան»:



ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԽՄԲԻ ԿԻՃԱԿԱՐՈՒՅՑ ԵՐԳԸ ԿԸՆԴԻ «ԵՎՐԱՏԵՍԻԼ»-ՈՒՄ

Եվրոպական հեռարձակողների միությունն այսօր թույլատրելի է Teapack խրայեյյան խմբի «Սեդմիթ կոնակը» վիճահարույց երգի մասնակցությունը մայիսին Հելսինկիում կայանալիք «Եվրատեսիլ» մրցույթին: Երգը հնարավոր առոմային պատերազմի մասին է, որը կարող է հրահրել բռնապետական երկրներից մեկի առաջնորդը: Մեկնաբանները գտնում են, որ երգի հեղինակները ակնարկել են Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեջադին, որն

առավել տանում էր միջուկային ծրագիրը և հայտարարել է, որ Իսրայելը «պետք է վերանա աշխարհի քարտեզից»: «Եվրատեսիլ»-ը թույլ չի տալիս քաղաքականացնել իր մրցույթները և նախկինում արգելել է որոշ երգերի մասնակցությունը: Teapack-ի անդամները կտրականապես ժխտում են, թե երգը վերաբերում է Իրանին: «Եվրատեսիլ»-ի եզրափակիչ մրցույթը տեղի կունենա մայիսի 12-ին: Հայաստանը ներկայացնելու է Հայկոն:



ԹՈՒՐԵԱՅԻՆ ԱՆՐԱՍՏԵՑ ԵՆ ԸՆԿՆԱԿԱՄԱՆ ԵՆ ԱՐԲԵՋԱՆՑԻ ՈՒՄՈՒՑԻՉՆԵՐ

Թուրք պատմաբանները մտադիր են Հայոց լեզու սովորել՝ արտասահմանյան երկրների արխիվներում պահվող փաստաթղթերն ուսումնասիրելու նպատակով: Այս մասին հայտնել է Թուրքիայի Պատմական ընկերության նախագահ, պրոֆեսոր Յուսուֆ Հալաչոյուն:

Յուս. Հալաչոյունը նշել է, որ «այսօր, երբ հայ և եվրոպացի պատմաբանները իրականացնում են Թուրքիայի արխիվների ուսումնասիրություններ, թուրք գիտնականները զրկված են տարբեր երկրներում հայոց լեզվով




պատմական փաստաթղթերի ուսումնասիրության համար, հաղորդում է ԱՊԱ-ն:

ՄԻԼԵՆԱՆ ԵՒ ՆԱՐԵԿ ԱՄԵՆԱՍՈՂԱՅԻԿՆ ԵՆ

2006թ-ին Հայաստանում ծնվել է 37 568 երեխա, որոնցից՝ 19 973-ը տղա, իսկ 17 595-ը՝ աղջիկ: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն, նորածիններին ամենահաճախ տրվող անունների շարքը 2006թ-ին գլխավորում են Միլենա և Նարեկ անունները:

Այս անուններով են կոչել նախորդ տարի ծնված համապատասխանաբար 706 աղջկա և 894 տղայի: Ընդ որում, եթե 2005 թ-ին աղջիկներին ամենից հաճախ Անի էին կոչում, ապա 2005թ-ին ես տղաներին ամենից շատ տրվող անունը Նարեկն էր: 2006 թ-ին հաճախ տրվող անունների շարքում երկ-



րորդ տեղում են Անի և Դավիթ անունները, երրորդում՝ Էլենը և Էրիկը: Աղջիկներին հաճախ տրվող անուններն են Անահիտը, Աննան, Մարիամը, Մերին, Լիլիթը, Մանեն, իսկ տղաներին՝ Արմանը, Գոռը, Հայկը, Արթուրը, Տիգրանը, Սամվելը, Արմենը, Արսենը:

ԸՆԿՆԱԿԱՄԱՆ ԵՆ ԵՐԿՐԻՑԻ ԵՄԵՆԱՍՏԵՑ

2006թ. հուլիսին Նորվեգիայի Բերգեն քաղաքում կնքվել է պայմանագիր Լիտվայի Կառնասի հայ համայնքի (նախագահ՝ Վահան Արզումանյան) և «Hilmar Reksten Almennyttige fond»-ի (անօրեն՝ նորվեգացի կոմպոզիտոր և դիրիժոր Էսպեն Սելվիկ) միջև՝ «Rekstensamlingen» թանգարանի բակում հայտնի և մարդասեր Ֆրիտյոֆ Նանսենին և ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձան-խաչքար տեղադրելու մասին: Թանգարանը գտնվում է Բերգենի ամենագեղեցիկ անկյուններից մեկում՝ Նորվեգիայի թագավորական նախախաչի դիմաց: Այս նախագծի հովանավորներն են Վիկտորի «Գարուն» հայ համայնքի նախագահ Օլեգ Իսակը և Լատվիայի «ՀԱՎԱՏԲ» հայկական միության նախագահ Սպարտակ Տեր-Ավետիսյանը: 2007թ. ապրիլի 21-ին Նորվեգիայում տեղի կունենա խաչքարի բացման



հանդիսավոր արարողությունը, իսկ ապրիլի 24-ին՝ նույն թանգարանի դահլիճում՝ Հայաստանի անկյան բացումը:

«ՀԱՎԱՏԲ» հայկական միություն Իրինա Տեր-Տաճատյան

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԸ ԿՈՉ ԵՆ ԱՆՈՒՄ ԶՈՐՋ ԲՈՒՇԻՆ ԶՃԱՆԱԶԵԼ ԸՆԿՆԱԿԱՄԱՆ ԵՆ

ԱՄՆ 100 առաջատար գործարարներ, որոնց թվում են Բիլլ Գեյթսը և Ուորեն Բասետը, նամակ են հղել նախագահ Զորջ Բուշին կոչ անելով չճանաչել Հայոց ցեղասպանությունը: Նամակում, մասնավորապես, ասվում է, որ «ցեղասպանության ճանաչումը կարող է աղետ հանդիսանալ ԱՄՆ-ի համար: Հայոց ցեղասպանության ճանաչման ղեկավարում առավելապես կտուժեն առևտրական հարաբերությունները Թուրքիայի և ԱՄՆ միջև»: Բացի այդ, նամակի հեղինակները համոզված են, որ ցեղասպանության ճանաչումը կխոչընդոտի Թուր-

քիայի և Հայաստանի հարաբերումները, հաղորդում են թուրքական ՋԱՄ-ները: Հիշեցնենք, որ Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևը ԱՄՆ Կոնգրեսին է ներկայացվել ընթացիկ տարվա հունվարին: Բանաձևի ընդունման հավանականությունն այս անգամ իրական է, քանի որ Կոնգրեսում մեծամասնություն կազմող դեմոկրատները հիմնականում կողմ են փաստաթղթի ընդունմանը: Նշենք նաև, որ եթե Կոնգրեսն ընդունի բանաձևը, ԱՄՆ նախագահն իրավասու չէ վետո դնել այդ որոշման վրա:

ԸՆԿՆԱՍՏԱՆԻ ԵՎ ԹՈՒՐԵԱՅԻ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԸ՝ ՄԻԵՎՆՈՒՅՆ ԽՄՐՈՒՄ

Փետրվարին Եվրոպայի մայրաքաղաք Ստոկհոլմում տեղի է ունեցել ֆուտբոլի Եվրոպայի 2009 թվականի երիտասարդական առաջնության որակավորման փուլի վիճակահանությունը:

Հայաստանի երիտասարդական հավաքականը վիճակահանության արդյունքներով հայտնվել է 2-րդ խմբում, որտեղ նրա մրցակիցներն են լիեյու Չեխիայի, Ուկրաինայի, Թուրքիայի և Լիտվենի շտեյնի երիտասարդական հավաքականները:

Մասնագետներից շատերը գտնում են, որ Հայաստանի հավաքականը հայտնվել է բավական բարձր խմբում, քանի որ Չեխիան, Ուկրաինան և Թուրքիան

դասվում են Եվրոպայի ուժեղագույն հավաքականների թվին:

Հայաստանը իր առաջին հանդիպումը կանցկացնի այս տարվա հունիսի 2-ին կամ 3-ին, իսկ վերջնական խաղացանկը պետք է համաձայնեցվի ազգային ֆեդերացիաների ներկայացուցիչների հետ:

Յուրաքանչյուր 10 խմբերից հաջորդ փուլ է անցնելու հաղթողը, ինչպես նաև երկրորդ տեղը գրաված 4 լավագույն հավաքականները: Փլեյ-օֆֆ փուլում այս 14 հավաքականները կխաղարկեն եզրափակիչ փուլի 7 ուղեգրերը: Եզրափակիչ փուլի 8-րդ թիմը դաշտի տերերն են՝ Եվրոպայի ֆուտբոլիստները:

նասիրություններից, քանի որ Թուրքիայում միայն մի գիտնական կա հայերեն խմացող՝ Ստամբուլի համալսարանի դասախոս Բիրան Դարաջան:

Յուս. Հալաչոյունը նշել է նաև, որ Թուրքիայի խորհրդարանի կողմից կատարված օրենսդրական փոփոխություններից հետո, որ թույլ են տալիս արտասահմանից մասնագետներին

հավաքել, հայոց լեզվի ուսուցիչներ կհրավիրվեն Ազրբեջանից. «Նախագծի ընդունվելուց հետո Ազրբեջանի Դարբադի տարածաշրջանից Թուրքիա կհրավիրվեն հայոց լեզվի մասնագետներ»: Լեզվի ուսուցման դասընթացի ավարտից հետո թուրք պատմաբանները կգործուղվեն արտասահման հայկական փաստաթղթերը ուսումնասիրելու համար, հաղորդում է ԱՊԱ-ն:

ՏԵՂԱՆԵՎԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

- Բառարան - 30ն ուր բառերը միշտ կոչս կը մնան:
- Գրադարան - 30ն ուր գիրք-փոշի եղբայր կը դառնան:
- Թանգարան - 30ն ուր անցեալը կը ծաղրէ ներկայը:
- Տպարան - 30ն ուր գրքերը «վիզա» կը ստանան:
- Վարժարան - 30ն ուր միշտ ուղեղի դուռը կը բանան:
- Արտասահման - 30ն ուր միշտ կ'ենթա ծուլունի կաթսան:
- Դատարան - 30ն ուր յոյսերը վերվար կը խաղան:
- Քաւարան - 30ն ուր մեղքերը կը շոգիանան:
- Կայարան - 30ն ուր կը գտնես մարդկային պարան:
- Մտան - 30ն ուր մուկերը կը բանան սեղան:
- Ճաշարան - 30ն ուր կը գտնես շատակեր Շարան:
- Ծառաստան - 30ն ուր ծառերը ծեռք ծեռքի կու տան:
- Պետքարան - 30ն ուր կ'այցելես օրը. մէկ անգամ:
- Գերեզման - 30ն ուր հաւասար են տերն ու ծառան:
- Գողգոթա - 30ն ուր ոչ մէկ մարդ վրոպ կը գթայ:
- Ամերիկա - 30ն ուր մտնողը կըստ ո՞ր եկայ:
- ՄԱԿ - 30ն ուր ազգերը կը հագնին դիմակ:
- Տաճար - 30ն ուր կը ծախեն մեղքերու օճառ:
- Ազարակ - 30ն ուր կը գտնես միշտ կաթ ու կարագ:
- Անապատ - 30ն ուր աւազը կը շնչէ ազատ:
- Առաստաղ - 30ն ուր դիտելով կը յօրինես տաղ:
- Անտառ - 30ն ուր օրէնքը խորթ է ու օտար:
- Աւերակ - 30ն ուր մտած է թրքական բանակ:
- Մրցադաշտ - 30ն ուր կը տիրէ հոգի մը անհաշտ:
- Քարայր - 30ն ուր չի կրնար մտնել վախկոտ այր:
- Շուկայ - 30ն ուր խաբուող մը և խաբող միշտ կայ:
- Երկինք - 30ն ուր սուրբերը կընեն հարսանիք:
- Եկեղեցի - 30ն ուր որ կ'երթաք Աստուծոյ այցի:
- Լուսին - 30ն ուր կը ծաղկի վարդը երազին:
- Կղզի - 30ն ուր հողը ջուրին կը դառնայ գերի:
- Բաղնիք - 30ն ուր երգիչի համբաւ կը շահիք:
- Գիւղ - 30ն ուր կը գտնես ուզածիդ չափ իւղ:
- Գինետուն - 30ն ուր կը մոռնաս կին, զաւակ և տուն:
- Դրամատուն - 30ն ուր դրամը հանգիստ կ'անէ ջուր:
- Վաճառատուն - 30ն ուր որ կ'իշխէ խօսքը կ'իմերուն:
- Ակումբ - 30ն ուր կը կազմեն գաղափարի ռուսք:
- Մատուռ - 30ն ուր Աստուծոյ կըսես քիչ մը տուր:
- Ծովեզոք - 30ն ուր կը լսես ալեաց վերջին երգ:
- Կրկես - 30ն ուր մերթ վախտը սիրտը կը լլայ կես:
- Քարտէ - 30ն ուր ուզածդ իսկոյն կը գտնես:
- Եղեմ - 30ն ուր հարց կու տաս՝ ուտե՞մ թէ չուտեմ:
- Հարթ - 30ն ուր այր մարդը կըստ արջուր եմ:
- Կոկորդ - 30ն ուր կը մտի չկշտացող որդ:
- Ախոռ - 30ն ուր էշերը կը քաշեն «ախ» խոր:
- Քաղնօ - 30ն ուր քսակը կը դառնայ գեր:
- Հայրենիք - 30ն ուր պապերդ թափեր են քրտինք:
- Հայաստան - 30ն ուր կը ճախրէ հոգին հայկական:

ՅՈՎԱԾԵ ԵՍԼ ՊՆՏԵՍԼ, «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ»

Հրիսաաարդական էգ

Էջի պատասխանատու՝ Միլվիա Հայրապետյան

ՄԻՆՉԵՎ ԸՆԴՈՒՄՆԱԿ

Ինչպե՞ս և ինչո՞վ կարելի է բացատրել «Ցեղասպանություն» կոչված բառը...

Արյան գույնի պես Ցեղասպանությունը, միախառնվել է մեր հոգու և մարմնի ամենափոքրիկ բջիջների հետ, որի մոռանալը անհնար է...



Ցեղասպանություն՝ բնակչության առանձին խմբերի՝ ազգային փոքրամասնությունների՝ ոչնչացում կոտորած՝ ազգայնական կամ կրոնական շարժառիթներով, գեոնոցիդ:



Ցեղասպանությունը, իր տարբեր տեսքերով, վերջ տալու ելքը մեկ է՝ պայքար՝ մինչև հաղթանակ...

Հողը կոպտարի միայն այն ժամանակ երբ նրա դեմ սար է կանգնած. թշնամու դեմ ծառանալ է պետք...

ՄԱՍԻՍԸ

Ա. Ահարոնյան

Մասիան ինձ համար, ինչպես Արարատյան աշխարհի յուրաքանչյուր զավակի համար միշտ եղել է մի հսկա միտք, մի տիտան...

րած հայ ժողովուրդը լուսայն ապրում է այս անօրինակ Սփինքսի հզոր միտքը, չի ըմբռնում, բայց զգում է, չի գիտակցում, բայց տար-



յան գաղափար, որ արձագանգել է ժամանակից ու տարածությունից դուրս, մահերից ու ավերակներից բարձր, ամպերի հետ՝ աշխարհին ասելու համար, թե «ես կա՛մ և պիտի լինեմ»... Նրա փեշերին ծվա-

տամորեն գուրգուրում է իր հոգու խորքում, որովհետև այն իր կրած տառապանքի, իր պրկված ու կողոպտված երազների, իր արդար ցատուձի և իր մեծություն պատկերն է:

ՖՐԱՆՑ ՎԵՐՖԵԼ

(1890-1945)

